2021 թվականի հոկտեմբերի 15-ից 2021 թվականի դեկտեմբերի 21-ը ընկած ժամանակահատվածի համար արդարադատության նախարարության վերահսկողական ծառայության փորձագետ Պետրոս Վարդանյանի կողմից կատարված աշխատանքի վերաբերյալ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Պետրոս Վարդանյանս, 2021 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված 54-Ա պայմանագրի հիման վրա աշխատում եմ արդարադատության նախարարության վերահսկողական ծառայությունում՝ որպես փորձագետ:

2021 թվականի հոկտեմբերի 15-ից 2021 թվականի դեկտեմբերի 21-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Դատավորների կողմից թույլ տրված ենթադրյալ կարգապահական խախտմանն առնչվող դիմում-բողոքների ուսումնասիրություն,
2. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի նյութերի նախապատրաստման աշխատանքների իրականացում,
3. Դատավորի կողմից թույլ տրված կարգապահական խախտումների հիման վրա կարգապահական վարույթի հարուցման և իրականացման գործընթացին մասնակցություն,
4. Քաղաքացիների կողմից ներկայացված հաղորդումների և կից նյութերի ուսումնասիրության արդյունքում կարգապահական խախտում չհայտնաբերելու դեպքում պատասխան գրությունների պատրաստման և ելքագրման ապահովում:

Հարգանքով՝ **Պետրոս Վարդանյան**

21.12.2021թ.